

խոռով իր հոգեվիճակն էր թուրքէն, այնքան տարբեր իր կոխկրտած միւս շրջաններէն: Այդ մարդիկը մոլթ էին եւ անժպիտ: Հաստ էին ու փարթամօրէն բարբարոս: Տարագըր, մէջքի գօտիները, ֆէսերու հսկայական ծոպերը, շալվարներուն բիրտ կտրուածքը անջինջ սեւեւ-լաւ շին անոր ուղեղին: Նոր փողոցներուն մէջ այդ թըրքուլիւնը ժահահոտ ու խղճող բան մը կը հոսեցնէր, որուն հանդիպած չէր անիկա ուրիշ քաղաքներ: Սեւ անոնց նայուածքը, հռոմէական լայն երեսները ու հսկայ պելսերը, միացած կազմին ալ բրտութեան՝ կը ճշդէին թուրքի տիպար մը, որ յատուկ է այդ սարահարթին: Այդ ձեռնարկու, լեզուանի, անգութ ու մոլեռանդ զանգուածին դէմ մերիները հանած են ուրիշ մը, նոյնքան ու աւելի ձեռնարկու, համոզման տուրքով աւելի հարուստ, արիւնի դէմ ըլլալու տեղ շահու եւ դրամի դէմ աւելի անողոք ու ժամու եւ աղօթքի մէջ թուրքէն վար չմնացող կեսարացին, զոր Մաթիկին բերնին մէջ տեսնելէ յետոյ՝ կեանքի ճամբաներուս պատի՛ւը պիտի ունենայի ստուգելու: Մեր բոլոր նահանգներէն կեսարիան կը զատուի պատուտող, չյոգնող, ստեղծող ու անկախ բնագոյներով: ԺԹ^Ը դարու հայ վաճառականութիւնը անոնց ձեռակերտն է գրեթէ: Մեծահարուստներուն բացառիկ տուրքերէն աւելի շահեկան են միջին տիպարին մեծ առաւելութիւնները, որոնք կը մասնաւորուին, թերութեան վերածուելու չափ խոշորնալով: Մաթիկը հիացած էր անոնցմով:

Հոն ճարեց անիկա իր ընկերը, քիչ մը տրամաթիք պայմաններու մէջ: Զուր չէր անցած անոր ուսումը, Մոսկուա, ատամնաբուժական ֆաքուլտետում: Այդ գիտութեան շնորհն էր այժմու իր ընկերը, Սեդրակ Տոմպայեանը, զոր վերածեր էր անիկա անուշիկ Սեդոյին: Ազատած էր զայն ստոյգ, գիտապէս ստոյգ մահէ մը - ինչպէս կը սիրէր պարծենալ - լինտերու շատ ցաւառիթ բորբոքում մը դարմանելով ազդու դեղերով, որոնք հականեխական պարզ լուծոյթներ էին սակայն: Սափրիչի